

ՊԱՏՄԱԿԱՆ

**ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԱԿՈՊՈՍ ՍԻՆԵՍԱՏ՝
ՌԻՒՏԱԻՈՐ ԵՐՌԻՍԱՂԷՄԻ (1337)**

Սարգիս Արքեպիսկոպոս Սինեսաց, ծագումով Օրբելեան, կը զահակալէ Տաթևի վանքի Աթոռին 1337 ին. իր գահակալութենէն քիչ վերջ, ուխտի կուգայ Ս. Երուսաղէմ, հաւատքով և ջերմեանով թիմար կ'այցելէ բոլոր Ս. Տեղերը և մեծապէս կը զնահատէ Ս. Յակոբեանց միաբանական եղբայրութեան կողմէ Գրիստոսի Ս. Կերեզմանին և այլ տօրինական Ս. Տեղեաց մասին կատարուած կարևոր և բարեպաշտական աշխատանքները:

Արժան է յիշել թէ՛ Սարգիս Արքեպիսկոպոսի Երուսաղէմ այցելութեան՝ Ս. Աթոռոյ գահակալն էր Վարդան Արեւելցի պատրիարքը (1331-1341), զբասէր և զորձուցնէր սեփական մը, որ մեծ ասպնջակաճառքի տուած է ուխտաւոր Սինեցի մետրապօլիտին. այս մեր Վարդան պատրիարքն էր որ 1331ին թելադրած և յորդորած է ծանօթ կրակեցի Ներսէս աբղղային՝ Ս. Հրեշտակապետի վանքին մէջ ընդօրինակելու բոլորազիր ձառընթիւ մը (թ. 282). զարձեւալ կը յորդորէ Կարապետ քահանան ընդօրինակելու 1332ին նոյն վանքին մէջ Մեկն. կաթ. բրթոց ի Սարգսէ ձեռագիրը այլ տեղեկութիւններով (թ. 299):

Վերև յիշատակեցինք թէ Սարգիս Արքեպոս. Օրբելեան տունէն էր ծագմամբ. յաջորդած էր որդի Չուլայոս Սեփանոս Օրբելեանի (1329), որմէ առաջ ալ կ'իշխէին Յովնանէտ Օրպել (1310) և Սեփանոս Օրպելեան (1286 + 1303), այս վերջինս էր որ միացուց երկփեղկուած երկու Աթոռները՝ Տարսու և Նորավսնց, այնպէս որ մէկ մետրապօլիտի մը իշխանութեան տակ կը կառավարուին երկու Աթոռները:

Իսխտաւորութիւն է՝ որ զանուած է Սարգիս Արքեպիսկոպոսի նկարեալ պատկեր ՉԶԻ թուակ, զբնագիր Մանրուսն մատենանի մէջ, որուն հետ է Ներսէս եպիսկոպոս մը, հաւանաբար Սարգսի յաջորդը. նկարիչ Աւագը գրած է հետևեալ ծանօթիւնը. «Մեծ և ամենբնջանիկ մետրապո-

լիտն և արհիական զուլին այսմ նահանգիս Տէր Սարգիս(»), խնդրող լեալ, . . . ի վաշխուսն անձին իւրոյ Սրբազանի և եղբորորդւոյ իւրոյ Յովնանցիոսի՝ կուսակրօն քահանայի, որ բազում ժամանակս զեզերի յուսումն Աստուածաշունչ չին և Նոր կտակարանաց և արտաքնոցն ևս . . . Այլ և եղաչեմ . . . յիշել յամենայն արտէ զարհական զուլին զՏէր Ներսէս, և զագղայինս նորա զամենայն. զհայրն Գրիգոր և զեղբայրն նորա Սարգիս սարկաւազն՝ ի Գրիստոս: Եւ զարձեւալ կրկին աղաչեմ յիւնցեք և Աստուած ողորմի առացեք Ներսէս րաբունապետին, որ թուի որիչ յարհիական զլիտն, սորա անուն գրեալ է ի վերայ գըլխոյ միոյ յերկուց եպիսկոպոսացն նկարելոց միւսոյն անորոշ մնայ, այլ հաւանորէն Սարգիս, և յետ նորա կացեալ Ներսէս յաթոն, զոր ոչ գտի ոչ ի կարգի եպիսկոպոսաց Սինեսաց և ոչ յայլ յիշատակարանս, ոչ յիշին և յաջորդք սոցա մինչև ի սկիզբն ժն. զարու՝ ցամա 70 (Տհ՝ս Սիւսկան, էջ 20-21):

1306ին կիպրոսէն ձեռագիր մազադարթեայ Սաղմոսարան մը նուէր կը զբերուի Ս. Աթոռին, այս ձեռագիրը գրչագրուած է կիպրոսի ձիպոս զիւղին մէջ զբնջ հովանաւ Սրբոց Հրեշտակապետացն Գարբիէլի և Միքայելի: ձիպոս զիւղը ժամ է Նիկիոսոյ, և յիշատակարանէն ալ յայտնի է թէ գըլչագրութեան ծանօթ գրիչներ ձիպոսի մէջ կ'աշխատակցին. նոյն գործին ուրիշ գրիչներ ալ նշանաւոր եղած են կիպրոսի կանչուոր վանքը Ս. Աստուածածնի՝ Մաղու-

(*) Նկար պատկերին մէջ Սարգիս մետրապոլիտ, Երուսաղէմի ուխտաւոր զուլիք ունի թագ մը՝ զագաթը խաչով. հագած է շուրջան՝ շարուած փոքր խաչերով. կը կէտ եմիփորոն խաչազարդ և Աւետարան մը ի ձեռին. մետրապօլիտը ունի ազնուականի զիմպոսի մը: Միւս նկար պատկերը Ներսէս եպիսկոպոսին՝ որ յաջորդը պիտի կոչուի մետրապօլիտ, յար և նման է մետրապօլիտին, բայց գլուխը թագ չունի, այլ սպիտակ վեղար մը:

տալի մէջ, ինչպէս նաև Ս. Մակարի մե-
նաստանին մէջ:

Վերև յիշուած ձիպոյի մագաղաթեայ
Սաղմոսարանը 32 տարի վերջ Սարգիս մե-
տրապոլիտ Միւնեաց իր ուխտաւորութեան
առթիւ շերմալին փափաքանօք կ'ընդունի
զայն անձնական զբամովը և կը տանի Տա-
թև, յետ ուխտաւորութեան: Այս մագաղա-
թեայ Սաղմոսարանի երկը յիշատակարան-
ները պիտի պարզենք, երկուքը կը վերա-
քերին բուն իսկ ձեռագրին, երրորդը զիրքն
ստացող ուխտաւոր Մետրապոլիտն: յետոյ
պիտի աւելցնենք Սարգիս մետրապոլիտն
մասին պատմական ակնարկներ:

Առաջին յիշատակարանը բովանդակու-
թիւն մ'է խորհրդական խօսքերու, և կա-
րեւոր տեղեկութիւններ Սաղմոսի զագափա-
րին վրայ, ապա գետեղուած է «Հանգա-
նակ»ը, որ ունի հետեւեալ յաւելումը, յե-
տոյ քերուած. «Հաւատամք եւ ի Սուրբ
Հոգին յանեղն եւ ի կատարեալն, որ է ի
հօր արդուովն ցուցաւ, որ ընդ հօր եւ ընդ
արդուոյ փառաւորի եւ երկրպագի, որ խօ-
սեցաւ յաբէնս»:

Կը կարծեմ թէ «քերուածը» կարգա-
ցած է Ս. Աթոսոյս ձեռագիրները ցուցա-
կազարդ հանգուցեալ Տիգրան 2. Թ. Սա-
ւալանեանց և կը գետեղէ հետեւեալ ծա-
նօթագրութիւնը. «Թուի յաւելուածս ըստ
նոր Հանգանակի Անաւարցեցոյն»:

Երկրորդ յիշատակարանին իմաստը հե-
տեւեղ է. այս Սաղմոսագիրքը զրի առ-
նուած է Հայոց 755ին (= 1306) Գրիգոր
Անաւարցեցիին հայրապետութեան և Թո-
րոսի սրգի կենտի թագաւորութեան օրով, և որ նոյն թուականին ալ նոյնին օժուժը
կը կատարուի: Սոյն Սաղմոսին ցանկացող
եղած է Սեփանոս քահանան և իր տասնայ իր
արդար վաստակովը: Զեռագրողը կը խնդրէ
թէ անոնք որ կ'օրինակեն սոյն գիրքը կամ
կ'ուսանին անկէ՝ յիշատակեն Ստեփանոս քա-
հանան, անոր Յովնաննէս եղբայրը, և անոնց
ծնողքը Քրիզոս քահանան, և իրենց մայրը՝
Սիպիլ: . . . Հետ այս յիշատակագրի բուն
ցրչագրողն է Լեւոն եհեցը և կը փափաքի
որպէսզի իր ծնողքը և ուսուցիչը Կոստան-
դին քահանան զգանհաս եւ զանհամեմատ
գրէին, եւ իր եղբայրը Սիոն քահանան
զգանհաս գրիչ, որ եւ մանկագոյն խալկ կո-
տոր եղեւ եւ եթող ինձ եւ իմօնս վէր

մեծ . . . : Այս գիրքը գրուեցաւ կիպրոս
հոշակաւոր կղզիին ձիպս կոչուած գիւզին
մէջ, զնոց հովանեաւ սրբոց հրեշտակագե-
տացն Գարբէէի և Միքայէէի: . . . : «Ե՛սայմ
ամի եզ և Պայլ սրոյ՝ տէրն կիպրոսի»:

Յետագայ յիշատակարանը որ 32 տարի
յետոյ գրուած է, թէ պատմական տեսա-
կէտով բաւական հետաքրքրական է, զոր
արժանի կը համարինք հաս զնել, ուրկէ
կ'իմանանք որ սոյն պատուական Սաղմոսաց
մէկ ընտելը օրինակուելէն անմիջապէս
յետոյ իրեւ յիշատակ գրկուած է Սուրբ
Աթոս, թիւեալ՝ իբր հարազատ օրինակ մը՝
գտնուելու համար Միտրանութեան ձեռքը,
իսկ Միւնեաց մետրապոլիտն Տէր Սարգիս
ուխտի եկած ըլլալով՝ սաստիկ փափաքա-
նօք կ'ընդունի զայն անձնական գրամովը:

Այս Գ. Յիշատակարանին մէջ է որ գրի
առնուած է Միւնեաց այս Սարգիս մետրա-
պոլիտին կենսագրական տեղեկութիւնները
զոր համառօտելով կը նշանակենք կարեւոր
կէտերը: Յիշատակագրողը Տաթևի այս
Արքեպիսկոպոսը կ'անուանէ «արհիական
քաւչապետ, մանաւանդ տան Միւնեաց,
և Պատոմեթոսէս»: Սարգիս Մետրապոլիտ
Տաթևի ուխտի և Միտրանոյ աշխարհին և
մենաստաններու անձուէքը ծառայողն ըլ-
լալով Երուսաղէմի Ս. Տեղեաց և Փրկիին
սխրագործ գերեզմանին կը ցանկար: Առ-
տուծոյ հողոյն առաջնորդութեամբ փու-
թաղէս հասնելով փրկագործ Տնօրինական
Ս. Տեղեաց մօտ, անձկալիբ ուղոյն բող-
ձանքները կը յայտնէր: Սարգիս Մետրա-
պոլիտ Երուսաղէմի Ս. Քաղաքին մէջ շատ
շնորհներ և արդիւնքներ ամբարած էր, և
կ'ստանայ այս ցանկը և երգարանը, որ է
Սաղմոսարանը Դաւիթ մարգարէին, իբր ա-
րեվայելուչ հայրապետութեան առաջին տա-
րին: Որքան որ այս Սաղմոսարանը իր ար-
հիական անձին վայելք մը եղած էր, այլ
նաև անջինջ յիշատակ մըն էր իր ծնողաց՝
իր հօրը Հասանին՝ որ էր Միւնեաց տան
մեծափառ իշխաններուն սերունդէն, և իր
մօրը տիկին Վասիսիսն, և իր եղբորը պա-
յազատ և քաջագօտի Իվանէի, որ էր ամի-
րա և պետ երկրին Որոտան: Կը յիշատակ-
ուի նաև մետրապոլիտն եզբօր որդին կո-
րովանա Յովնաննէս նորոնձայ քահանան
և նախաւոր Պէւտ համալսարանին, ուր մեծ
շանքով և սիրով հետեւեցաւ իմաստութեան

և հաւատոյ սուրբ ծանօթութեանց ու ան եղաւ աշտանակի վրայ դրուած աշխարհաւորս ճրագ մը: Վերջնոյս եղբայրներն էին Հասան և Զաքարէ հաստարգաւակ և հրակայազօր երիտասարդներ(*):

Սարգիս Մետրապօլտի օրով Հայոց կաթողիկոսն էր՝ Յակոբ Բ. Անաւարզեցիին (1327-1359), որ քրօջ որդին էր Գրիգոր Է. Անաւարզեցիին (1293-1307), որուն լատինամօլ ճնդկերուն հնթարկուած է իր սղգականը: Եւ Հայոց թագաւորը՝ Լեւոն, աչորրորդ ի կարգս թագաւորաց Լեւոնեանցո: Սիսական տանտէրութեան Հայոց եւ Վրաց մեծ սպարապետ՝ թագաւորմ իշխան Բուրթել և անոր ծիրանեծինը զաւակներն են Պիղզին և Իվանէ, որոնք իրենց հօրը բարեպաշտութեամբ նըմանող էին. այսինքն խոհականութեամբ, արքունեաց մէջ յառաջակէմ և մեծափառ. Ազի մեծամեծա արար տէր երեսաց սոցա: Անոնք որ այս Ստլժտարան երգարանին կը հանդիպին կամ կ'ընդօրինակեն զայն, պէտք է սողորմի ասել և թողութիւն յանձանաց խնդրին յանաչառ տուողէն: Այս յիշատակի մատանը Սարգիս Մետրապօլտի վերջնասացութեան ժամանակ Յարթիական թուականն էր 922 (786-1337) և փոքր շրջանի թուականն, որ և սարկաւագազիր կը կոչուէր, ՄՄԳ, և Գրիստոսի փառք միշտ:

Այս յիշատակարանին բովանդակութիւնը համառօտաբար լրացնելէ վերջը կը բացատրենք յիշատակուած քանի մը անունները. կը յիշուի Սարգիս Մետրապօլտին յատուկ տիտղոս մը Պոսօծեդեոնես անունով, ըստ Հայր Ալիշանի, այս անունը յունարէն կը նշանակէ Հոգացող (ՏԵՍ Սիսական, էջ 19): Այս մասին Սիւնեացի պատմիչը մանրամասն կը յիշատակէ, ԺԳ. զարուն կատարուած էր անոր ձեռնադրութիւնը և պատուուած

էր կաթողիկոսէն և Լեւոն Բ. Բուրթնեանց թագաւորէն, սկորգեայ յատիեան մետրապօլտութեան, և կոչել Պոսօծեդեոնես Գատրիարքին Հայոց», սոյն Սարգիս Մետրապօլտին ալ ի վերջոյ կը շնորհուի նոյն պատուանունը իբր մետրապօլտ Տաթևի վանքին:

Այս յիշատակարանին համաձայն Սարգիս Մետրապօլտի հայրը կը կոչուի Հասան «որ է յազգէ և յաչնէ մեծափառ իշխանաց ասն Սիւնեաց»: Ժօրը անունը Տիկին Վախախ, եղբայրը Իվանէ, որուն զաւակը՝ նորընծայ քահանան Յովնանէս, որ է Ռրոսեցիին, 1337ին Սարգիս Մետրապօլտին կը օրթ թվանէի զաւակը, (տես Սիսական, էջ 217):

Սիսականի Նորավանքին մէջ Բուրթել եւ զաւակները կը հասուցանեն հոյակապ եկեղեցի մը որ 1840 թուականին երկրաշարժէն կը կործանի, բայց անոր փլատակները ցոյց կուտան Բուրթելեան տաճարին հոյակապ գեղեցկութիւնը. շինութեան արձանագրութիւնը տակաւին կը կարգացուի աւերակներու վրայ, որ է այս. «Կանաւն Ասուծոյ Ես Պարոն Բուրթել իօխանաց իբխան է ամուսինք իմ Վախախ եւ ուղիք իմ Բեկեկէ եւ Իվանէ կանգեցեալ գեղեցկեցին ի մեր հստալ արդեամբ» (ՏԵՍ Արարտ, 1890, էջ 44, Գաղթերունի):

Յիշատակարանը ի վերջոյ կը յիշէ հայեցի երկու տուժարները, մին՝ Յաբեթական, 922 (786 = 1337), միւսը՝ Սարկաւագազիր տուժար, ՄՄԳ (254), և կը վերջացնէ Յիշատակարանը:

Յիշատակարանս գրողը զանց կ'ընէ Հայոց լուսաւորութեան քուականը, պէտք է գիտնալ սակայն թէ երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Հայաստանը լուսաւորեց քրիստոնէական լուսով հայերը ասոր յիշատակը յաւերժացնելու համար՝ այդ օրէն (1586 տարի առաջ) սկսան թուական գործածել, սակայն այդ թուականը միայն գրչագիրներու մէջ գործածուեցաւ և այն՝ շատ կարճ ժամանակ:

Գալով հին տուժարական թուականին՝ զոր կը գործածէ յիշատակարանին գրիչը, սա մտքով թէ Հայերը Լուսաւորչէն յետոյ սկսեցին Անդրէաս Բիւրանդացիին դրած 200 ամաչ շրջանը գործածել, որուն լրանալէն վերջ Զատիկ տօնը խախտուեցաւ և

(* Յօդորդ և ազգակից պատմիչ եպիսկոպոսին՝ Յովնանէս Օրթիլան՝ որ իշխանական պերճութեամբ վարէր յոյժ քան զեղբօր որդի հաւուն իբրայ, որ յիշ թողեայ յիշատակս ի Տաթև, իսկ իւր յայրորդն և տոճակից Սարգիս եպիսկոպոս՝ գործութեամբ յիշի և վազագոյն քան զպիսկոպոսութիւնն (1337), «գողով սպասաւոր սարք ուխտիս եւ սասանամարտակ մեհաւսնախ», յորում ժամանակի վարժէր անդ և եղբորորդին իւր նորընծայ քահանայն Յովնանէս այն է հուշակեայ Որոսեցիին, որ՝ սրպէս ստեցաւ, բազում ամօք յետոյ շինեաց զձանդակատունն (Սիսական, էջ 237):

այդ առթիւ ազգին մէջ չփոթութիւն ծագեցաւ, ուստի Գրիստոսի 551 թուին Նզիվարդեցի Մովսէս երկրորդ կաթողիկոսը ժողով կազմելով Դուին քաղաքին մէջ, կարգաւորեց մեր տոմարը և նոր թուական սահմանեց, որ կոչուեցաւ «Հայոց մեծ թուական», և որ մինչև այժմ կը գործադրուի ազգին մէջ, ան կը սկսի Գրիստոսի 552 թուի Օգոստոս 11ին, որ օրը Հայոց առաջին ամսի՝ այն է՝ Նաւասարդի՝ առաջին օրը գրուեցաւ: Մեծ թուականը նոյնքան ամիսներ և օրեր ունէր, որքան և Հայկայ հին թուականը:

Փառով Սարկաւազաղիի սումարին՝ հետեւեալ բացատրութիւնը կը տրուի թէ Եկեղեցական տօները կանոնաւոր տօնելու համար՝ այդ տարիներէն ոչ մին ալ յարմար չէր, որովհետև այդ տարիներու հաշուով միևնոյն տօնը ամէն տարի միևնոյն օրը չէր պատահեր, այլ զանազան օրեր, այդ պատճառով ալ հարկաւոր էր մի անշարժ տարի ունենալ, և որը հաստատուեցաւ Յովհաննէս Սարկաւազ կոչուած գիտնական վարդապետի աշխատութեամբ: Ան 1116 թուին մեր տոմարը վերանորոգեց և նոր թուական սահմանեց, որ կոչուեցաւ Փոքր կամ Սարկաւազաղիի և կամ Յայսմաուրաց: Յովհաննէս կարգադրեց որ ամէն տարի աւելցող զրեթէ 6 ժամերուն չորս տարուան ընթացքին մէջ գոյացած 1 օրը աւելցուի Աւելեաց ամսի 5 օրերուն վրայ, և այդպիսով Յուլեան տոմարի նման Հայոց տարին ևս՝ չորս տարին մի անգամ նահանջ ըլլայ: Այդպէս ալ ան դասաւորեց եկեղեցական բոլոր տօները Յայսմաուրացի մէջ, որոնք անշարժ կը տօնուէին ամէն տարի (Տե՛ս Տոմար ևւ Տօնացոյց, էջ 10-11, Գիււտ զհնյ. Աղանանանց):

ՄԿՐՏԻԶ ԱՐՔԵՊՍ. ԱՂԱԿԵՆՈՒՆԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԷՆ(*)

Ըստ որում բարեչըրութիւնը կանգ առնել չգիտէ, հետեւաբար հայերէնը կանգ առնելու չէր նաև Արծաթէ դարի շրջանի վրայ և շարունակելու էր իր քնական ճանապարհը, հետզհետէ զարգանալով կամ փոփոխուելով: Այստեղ յառաջ էր գալիս մի նոր հանգամանք: Ե. դարի հայոց լեզուն՝ որ Մ. Մեհարպի և իր անմիջական յաջորդների ձեռքով արձանագրուել էր գրքերի մէջ, հաստատուն ու անփոփոխ մնում էր նոյն գրքերում. եկեղեցին անձեռնմխելի պահում էր նրան իբրև սուրբ գրքերի լեզու և աշակերտներն ու ապագայ հեղինակները սովորում էին դարոցում իբրև օրինակելի լեզու: Երբ նրանք պէտք էին ունենում գրի առնելու իրենց մտքերը, աշխատում էին որքան հնարաւոր էր իրենց, հետեւի այդ օրինակելի լեզուին: Այսպէսով Ե. դարի լեզուն ոչ միայն Ե. դարի գրուածքների, այլ և հետզհետէ իւրար յաջորդող դարերի գրուածքների մէջ մնում էր անփոփոխ, ենթարկուելով միայն անհատական ոճային փոփոխութիւնների և մերժելով ամէն օտար նւթական ազդեցութիւն: Ընդհակառակը ժողովրդական լեզուն, որ Ե. դարում նոյն էր գրական լեզուի հետ, մի կողմից քնական աճումով եւ միւս կողմից օտար ազդեցութիւնների տակ՝ հետզհետէ փոխում էր ազատօրէն, այնպէս որ գրական անփոփոխ լեզուի և ժողովրդական յարափոփոխ լեզուի միջև տարբերութիւնը քանի գնում մեծանում էր:

Երկու լեզուների ընթացքը մենք կարող ենք պատկերացնել մի սուր անկուշնով, որի զապաթը Ե. դարն է, ուր գրական և ժողովրդական լեզուները նոյն են. սուր անկեան հորիզոնական կողը ներկա-

(*) Վերին աստիճանի իր ամենականոնութեամբ համար, կը փափաքեմք ՍՄՆԻ ընթերցողներուն ներկայացնել մեծանուն հայագէտ Պրոֆ. Անառեանի թեսուիքը Միջին Հայերեցիս վրայ, առնելով զայն իր «Պատմութիւն Հայ լեզուի» գործէն, որ քանի սր օտարներ առաջ վարձատրուեցաւ «Սերոց Թարգմանաց Դուրեան» մշտանակէն: ԿՄԲ. 1